ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ «ՔԱՅԼՈՂ ՄԱՐԴԸ» ՔԱՆԴԱԿԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 3-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը.

Երևանի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն անվանի քանդակագործ Արտո Չաքմաքչյանի հեղինակած «Քայլող մարդը» քանդակը Երևան քաղաքի Ռուսաստանի հրապարակում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ –ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ «ՔԱՅԼՈՂ ՄԱՐԴԸ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքի ավագանու որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Երևանի քաղաքապետին ուղղված 24.10.2019թ. հ.01/1/24289-19 գրությունը, որով առաջարկվում է Երևանի Ռուսաստանի հրապարակում՝ որպես ազգային մոդեռնիզմի բացառիկ նմուշ տեղադրել հայազգի անվանի քանդակագործ Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակը: Գրության մեջ նշված է, որ քանդակի ձուլման և մոնտաժման աշխատանքների կարգավորումը կհոգա նախարարությունը:

Արտո Չաքմաքչյանի ստեղծագործությունները զարդարում են աշխարհի տարբեր քաղաքների հրապարակներն ու թանգարանները: Մինչդեռ վարպետը միշտ երազել է իր ստեղծագործություններից մեկը ունենալ Երևանում: Դեռևս 2000-ականների սկզբին նրան խոստացել էին «Քայլող մարդը» քանդակը տեղադրել Հյուսիսային պողոտայում, սակայն նրա երազանքը կենդանության օրոք այդպես էլ չիրականացավ:

Քանդակի տեղադիրքը Ռուսաստանի հրապարակում կապահովի վերջինիս առավել շահեկան տեսողական ընկալումը տարածության մեջ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ «ՔԱՅԼՈՂ ՄԱՐԴԸ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ «ՔԱՅԼՈՂ ՄԱՐԴԸ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՈՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին»որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ